ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1964 Общественные науки

Ա. Պ. ՍԻՄՈՆՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՒՐՎԱԳԻԾ

Պետհրատարակչություն. 1963. 545 էջ

•

Ամեն մի մայրաքաղաք ժողովրդի կյանքում, նրա զարգացման դարավոր պրոցեսում ունենում է անգնահատելի, վճռական նշանակություն։ Մայրաքաղաքը ժողովրդի ուղեղն է. այնտեղ են կենտրոնանում նրա մտավոր լավագույն ուժերը, զարկանում նրա հասարակական-քաղաքական կյանքը։ Մայրաքաղաքում են վճռվում ժողովրդի համար կարևորագույն, բախտորոշ նշանակություն ունեցող հարցերը։

Մայրաքաղաքը դառնում է գիտության, կուլտուրայի, արվեստի, ճարտարապետության, արդյունաբերության և ընդհանրապես ժողովրդի կյանքում ձեռք բերված խոշորագույն նվաճումների հայելին։ Նայելով մայրաքաղաքին, կարելի է պատկերացում կազմել ժողովրդի մասին։ Իրոք, երբ այսօր նայում ենք աշխարհի լավագույն մայրաքաղաքներին՝ Մոսկվային, Փարիզին, Հռոմին, Աթենքին և այլն, ապա որոշակի պատկերացում ենք կազմում այն ժողովուրդների պատմության և լավագույն սղպային տրադիցիաների մասին, որոնք կյանքի են կոչել այդ հիասքանչ մայրաքաղաքները։

Լինելով մայրաքաղաքի թանգարաններում, ծանոթանալով պատմական և ժամանակակից լավագույն ճարտարապետական հուշարձաններին, էջ առ էջ ընթերցելով նրա հերոսական անցյալի առանձին դրվագները, մենք կարծես թե ընթանում ենք տվյալ ժողովրդի բազմադարյան պատմության դժվարանց կածաններով։

Ահա թե ինչու, չափազանց դժվար է գրել մայրաքաղաքների պատմությունը, որովհետև գրել այն, նշանակում է գրել ժողովրդի, նրա լավագույն նվաճումների, նրա ինտելեկտուալ զարգացման պատմությունը։

Սակայն, չնայած դժվարություններին, բոլոր ժողովուրդների պատմաբաններն էլ ձեռնամուխ են լինում իրենց մայրաքաղաքների պատմության ստեղծման խնդրին։ Բնական է, որ հայ պատմաբանները ևս լուրջ ուշադրություն են դարձնում Հայաստանի մայրաքաղաքի պատմության ուսումնասիրությանը։

Երևանի պատմությունը սերտորեն կապված է հայ ժողովրդի հերոսական պատմության հետ։ Մնալով դարերի խորքից, Երևանը իրեն կյանքի կոչող ժողովրդի հետ անցել է հերոսական ուղի։ Օտարերկրյա նվաճողները բազմիցս հրդեհել են այն, ավերակների վերածել և հողին հավասարեցրել։

Միայն սովետական իշխանության տարիներին Երևանը ապրեց իր վերածնունդը և դարձավ Սովետական Միության տնտեսական ու մշակութային խոշորագույն կենտրոններից մեկը։ Բայց մինչև այժմ սոցիալիստական Երևանի պատմությունը դուրս էր մնացել սովետահայ պատմաբանների ուշադրության շրջանակներից։

Սովետահայ պատմագրության մեջ գոյություն ունեցող այդ բացը լրացվեց պատմական գիտությունների թեկնածու Ա. Սիմոնյանի «Երևան քաղաքի պատմությունը» խորագրով ստվարածավալ ուսումնասիրությամբ (ռուսերեն)։

Հեղինակը, տարիների քրտնաջան աշխատանքով, արխիվային և հրապարակված նյութերի բարեխիղճ ուսումնասիրությամբ, ստեղծել է մի աշխատություն, որը խոշոր գիտական ներդրում է քաղաքների պատմության ստեղծման դժվարին ընագավառում։

Աշխատությունը նվիրված լինելով սոցիալիստական Երևանի պատմությանը, ունի առանձին բաժին, որտեղ տրված է մեր մայրաքաղաքի պատմությունը՝ նրա հիմնադրումից մինչև սովետական կարգերի հաղթանակը։ Այդ բաժնում ընթերցողը համառոտակի ծանոթանում է Երևանի անցած դարավոր ուղու, օտար նվաճողների, սեփական հարստահարիչների դեմ մղված

պայքարի, ազատագրական շարժումների, կուսակցական կազմակերպությունների, հեղափոխական գործիչների գործունեության և սովետական կարգերի հաղթանակի պատմության հետ։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակով, գրում է հեղինակը, սկսվում է Երևանի պատմության նոր շրջանը, որն իր բովանդակությամբ անհամեմատ ավելի հարուստ է, քան դրան նախորդած տառապանքների և մաքառումների երկար դարերը։ Եվ իրոք, սոցիալիստական Երևանը, որի զարգացումը սերտորեն կապված է Սովետական Միության բոլոր ժողովուրդների տնտեսության և մշակույթի ընդհանուր վերելքի, լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի հետ, սովետական իշխանության տարիներին անճանաչելիորեն փոխվել, դարձել է արդի տեխնիկայով զինված արդյունաբերական խոշորագույն կենտրոններից մեկը։ ԵՊԼ 1913 թ. Երևանը փոքր գավառային քաղաք էր, մոտ 30 հազար բնակչությամբ, սպա այժմ՝ հիսուն տարի անց նրա բնակչության թիվը անցնում է 600 հազարից։ Մայրաքաղաքին բաժին է ընկնում ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին։ Հայաստանի ձեռնարկությունների դրոշմը կրող 100 անուն արդյունաբերական արտադրանք է արտահանվում աշխարհի 57 երկրներ։

Ա. Սիմոնյանը մանրամասն շարադրում է արդյունաբերության, էլեկտրիֆիկացման, տրանսպորտի, քաղաքային տնտեսության, բնակարանային շինարարության և առևտրի բնագավառում ձեռք բերված մեծագույն հաջողությունների հանրագումարները։

Աշխատության մեջ տեղեկություններ է տրվում Երևանի բոլոր խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների մասին, պատմվում է քաղաքի կուսակցական կազմակերպությունների կատարած աշխատանքի, արտադրության առաջավորների, կոմունիստական աշխատանքի բրիգադների աշխատանքային սխրագործությունների մասին։

Արդյունաբերության զարգացումը Երևանում ուղեկցվում է բանվոր դասակարգի քանակական և որակական աճով։ Վերոհիշյալ հարցերի վերլուծումը հեղինակը կատարել է այնքան լավ, որ թվում է թե այն պետք է զգալի օգնություն հանդիսանա նրանց համար, ովքեր զբաղվում են բանվոր դասակարգի և արդյունաբերության պատմության ուսումնասիրությամբ։

Մենագրության մեջ զգալի տեղ է հատկացվել նաև բնակչության առողջապահության և ֆիզիկական դաստիարակության հարցերին։ Ցույց է տրված այն արմատական շրջադարձը, որ տեղի է ունեցել այդ բնագավառներում։ Բժշկական կադրերով ապահովվածությամբ մեր ռեսպուբլիկայի մայրաքաղաքը առաջ է անցել նույնիսկ զարգացած կապիտալիստական երկրներից։ Երևանում այժմ մոտավորապես 350—400 հոգուն ընկնում է մեկ բժիշկ, ԱՄՆ-ում՝ 770, Դանիայում՝ 950, Ֆրանսիայում՝ 1100, Անգլիայում՝ 1200, Թուրքիայում՝ 3500, իսկ Իրանում՝ 9 հազար հոգուն։ Խոսելով այն մասին, որ նախահեղափոխական Հայաստանի ծանր տնտեսական պայմաններում ոչ մի հնարավորություն չկար սպորտի զարգացման համար, հեղինակը շարադրում է այն հաջողությունները, որոնք ձեռք են բերվել հետհոկտեմբերյան ժամանակաշրջանում։ Երևանն այժմ ունի ֆիզկուլտուրայի ինստիտուտ, սպորտային դպրոցներ, 16 ստադիոն, 465 սպորտային հրապարակ, 106 մարմնամարզական և այլ տիպի դահլիճ, ջրավազաններ և այլն։

Սովետական իշխանության տարիներին արմատապես փոխվել է Երևանի տեսքը։ Կառուցվել են բազմաթիվ նոր մայրուղիներ, հրապարակներ, բուռն զարգացում են ստացել քաղաքային տնտեսության բոլոր ճյուղերը։ Երևանը հռչակված է իր անկրկնելի ճարտարապետությամբ։ Զուգակցելով ճարտարապետության ազգային և համաշխարհային նվաճումները, հայ ճարտարապետները և շինարարները ստեղծել են նոր, սոցիալիստական Երևանը, որի ճարտարապետական կոթողները մեկ անգամ ևս ցույց են տալիս, թե ստեղծագործական ինչպիսի սխրանքների է ընդունակ հայ ժողովուրդը։ Ճարտարապետությանը և շինարարությանը նվիրված բաժինը, տնկասկան, աշխատության ամենահաջողված մասերից է։

Աշխատության զգալի մասը հեղինակը նվիրել է կուլտուրայի, գիտության, արվեստի և գրականության զարգացման պատմությանը։ Մայրաքաղաքը դեպի իրեն է ձգում հայ ժողովրդի լավագույն ուժերին։ Երևանը դարձել է հայ ժողովրդի գիտության ու կուլտուրայի միակ կենտրոնը։ Սովետական իշխանության տարիներին կուլտուրական հեղաշրջում իրագործելու պրոցեսում լիովին վերացվեց անգրագիտությունը, ստեղծվեցին բազմաթիվ հանրակրթական դպրոցներ, տեխնիկումներ և բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Երևանում գործում են 186 դպրոց և 11 բարձրագույն ուսումնական հիմնարկություն։

Սովետական գիտությունը այսօր դարձել է ամենաառաջավորը աշխարհում, այն ձեռք է բերել այնպիսի հաջողություններ, որոնք ոսկե տառերով պիտի գրվեն մարդկության պատմության համայնամատյանում։ Հայ տաղանդավոր գիտնականները, որոնց անունները վաղուց դուրս են եկել Սովետական Միության սահմաններից, նույնպես մասն ունեն գիտության ձեռք բերած

պատմական նվաճումներում։ Երևանը գիտության քաղաք է։ Այնտեղ է գործում Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիան իր գիտահետազոտական ինստիտուտներով։ Գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում համախմբված հայ դիտնականները ուսումնասիրում են հայ ժողովրդի և նրա մշակույթի բազմադարյան պատմությունը՝ սկսած նրա ծագումից մինչև մեր օրերը։ Մեր գիտնականները մեծ հաջողություններ են ձեռք բերել նաև միջուկային ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, աստղագիտության, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, կիբեռնետիկայի, քիմիայի և համաշխարհային գիտական միտքը զբաղեցնող բազմաթիվ կարևոր այլ պրոբլեմների ուսումնասիրման բնագավառում։ Հայոց գիտությունն իր բազմադարյան պատմության ընթացքում երբեք զարգացման այսպիսի աստիճանի վրա չի եղել։

Ա. Սիմոնյանը վերլուծում է Երևանում զարգացող բազմաճյուղ գիտության անցած պատմությունը, ներկա վիճակը և խոսում հեռանկարների մասին։ Նա մեծ սիրով պատմում է հայ գիտնականների ավագ սերնդի ներկայացուցիչներ՝ Հ. Մանանգյանի, Հ. Աճառյանի, Ս. Մալխասյանի, Լեոյի, Մ. Աբեղյանի և շատ ուրիշների դիտական բեղմնավոր գործունեության մասին, արժեքավորում նրանց գիտական ժառանգությունը։ Մենագրության մեջ հեղինակը մանրամասն լուսաբանում է նաև հայ գիտնականների միջին և երիտասարդ սերունդների գործունեությունը, գիտնականներ, որոնց հայտնագործություններից շատերը մտնում են համաշխարհային գիտության գանձարանը։

Չի կարելի գրել Երևանի մասին և չտալ այն պատմական նվաճումները, որոնք ձեռք են բերվել գրականության և արվեստի բնագավառում։ Սովետահայ գրականության և արվեստի զարգացումը անբաժանելի է սոցիալիստական Երևանի պատմությունից։ Հարցը նրանումն է, որ նախահեղափոխական Երևանը իր տնտեսական և կուլտուրական չափազանց ցածր մակարդակով ի վիճակի չէր կարևոր դեր խաղալու հայ մշակույթի զարգացման գործում։ Հայ գրողները մեծ մասամբ գործում էին հայրենիքից դուրս։ Սովետական իշխանության հաղթանակից հետո դրությունը արմատապես փոխվեց։ Երևանը դարձավ հայ ժողովրդի գրական-գեղարվեստական մտքի կենտրոնը։ Ուսումնասիրության մեջ Ա. Սիմոնյանը տալիս է սովետահայ գրականության անցած ուղու համառոտ բնութագրությունը, անդրադառնում է նաև հայ ականավոր գրողներ՝ Ավ. Իսահակյանի, Ա. Շիրվանզադեի, Դ. Դեմիրճյանի, Ե. Չարենցի, Ա. Բակունցի և շատ ուրիշների գրական գործունեությանը։ Գրականության, թատրոնի, երաժշտության, նկարչության և կերպարվեստի ասպարեզներում սովետական իշխանության տարիներին հանդես են եկել բազմաթիվ նոր դեմքեր։ Հեղինակը նրանց գործունեությունը ևս դուրս չի թողնում իր ուսումնասիրության շրջանակներից։ Բացի առանձին գործիչների գործունեությունից տալիս է նաև թատրոնի, կինոյի, երաժշտության և կերպարվեստի զարգացման համառոտ բնութագրությունը։

Ամփոփելով աշխատությունը, Ա. Սիմոնյանը նշում է, որ կոմունիստական հասարակության ծավալուն շինարարության ծրագիրը զարգացման ավելի լայն հեռանկարներ է բացել սոցիալիստական Երևանի հետագա բարգավաճման համար։

Այսպիսով, հեղինակը Երևանի պատմությանը նվիրած իր ստվարածավալ ուսումնասիրության մեջ, ի մի բերելով գոյություն ունեցող հարուստ նյութերը, կարողացել է ընթերցող հասարակայնությանը ներկայացնել մեր քաղաքամայրի հարուստ ու գեղեցիկ կենսագրությունը։

Սակայն այս հաջողված աշխատությունն ունի մի շարք թերություններ։ Պակասում է օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը։ Աշխատության առանձին մասեր կրում են տեղեկատուի բնույթ, որոշ թվական տվյալներ կարիք ունեն ճշտման։

Ա. Սիմոնյանի «Երևան» մենագրությունը, որը մի քանի օրում վաճառվեց, հրատարակվել է ռուսերեն, այն էլ փոքր տպաքանակով՝ 1000 օրինակ։ Ցանկալի է, որպեսզի հեղինակը վերացնի գրքում տեղ գտած առանձին թերությունները, ուշադրություն դարձնի դիտողությունների վրա և այն ներկայացնի հայերեն հրատարակելու համար։

Լ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ։